«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տեխնոլոգիա առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Զախարյան Նարինե

Ուսումնական հաստատություն՝ <<ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

Երևան 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

“Հայաստանի պատանեկան նվաճումներ” կազմակերպության կողմից, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երաշխավորմամբ և հաստատմամբ , դպրոցներում Տեխնոլոգիա առարկայի ծրագրում որպես բաղադրիչ ընդգրկված է Ձեռնարկատիրական կրթությունը 2-րդից 7-րդ դասարաններում :
Ձեռնարկի նպատակն է, որպեսզի աշակերտները վաղ տարիքից ծանոթանան ձեռներեց և ձեռներեցություն, բիզնես գաղափար, շուկայի հետազոտություն, մարկետինգ, բիզնես պլան և բիզնես էթիկա հասկացությունների հետ: Քանի որ ձեռներեցությունը անձի՝ իր մտահղացումը կամ գաղափարը փող վաստակելու նպատակով գործողության և արդյունքի վերածելու ընդունակությունն է, հետևաբար, այս երկու ոլորտները՝ ձեռնարկատիրական կրթությունը և տեխնոլոգիան կնպաստեն, որ սովորողների մոտ զարգանան թե՛ բիզնես գաղափարներ մտածելու, թե՛դրանք կյանքի կոչելու կարողությունները: Եթե տեխնոլոգիան աշակերտներին օգնում է սովորել՝ ինչպես կարելի է սեփական ձեռքերով առարկաներ և իրեր պատրաստել, ապա ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը օգնում է նրանց հասկանալու՝ արդյոք այդ առարկան պիտանի է օգտագործման համար, արդյոք այն ունի պահանջարկ և կարող է հետաքրքրել մարդկանց այնքան, որ նրանք պատրաստ լինեն այն գնելու, արդյոք իրենք պատրաստելու ճիշտ առարկա են ընտրել,այդ առարկայի ընտրումով ինքը չի վնասում շրջակա միջավայրը և բնությունը: Ձեռնարկատիրական բաղադրիչի ներդրումը ենթադրում է, որ աշակերտը պետք է հասկանա և գնահատի իր պատրաստած առարկայի ապրանքային արժեքը, պարտադիր չէ, որ նա անպայման վաճառի այն:

Հետազոտության նպատակը՝

➢ Ուսումնասիրել՝ որքանով է անհրաժեշտ և արդյունավետ Ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը դպրոցում ;

➢ Բացահայտել՝ որքանով են սովորողները տիրապետում

“Ձեռներեց և ձեռներեցություն” գաղափարին:

Հետազոտման մեթոդներ

ա) զրույց բ) հարցում գ) դիտարկում

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը կնպաստի, որպեսզի աշակերտները

- մտածեն կաղապարներից դուրս,
- մտածեն ստեղծագործաբար,
- մտածեն նոր ձևով, լինեն նորարար,

- դառնան ինքնավստահ,
- կարողանան կայացնել որոշումներ,
- ձեռք բերեն կամային բարձր հատկանիշներ՝ նախաձեռնողականություն, համարձակություն, խիզախություն, ինքնուրույնություն, վճռականություն և տոկունություն,
- կարողանան ներգրավվել թիմային աշխատանքում,
- կարողանան պլանավորել գործողությունները,
- սովորեն փող աշխատել,
- լինեն խելացի սպառողներ,
- լինեն խելացիև պարկեշտ իրենց գործունեության մեջ և առհասարակ կյանքում,
- պատկերացնեն ձեռներեցի և բարիք ստեղծողի դերը և նրանց տարբերությունը,
- իմանան փող վաստակելու նպատակով գործ նախաձեռնելու և կազմակերպելու կարևորությունը,
- իմանան՝ ինչ է բիզնես գաղափարը և բիզնես պլանը,
- կարողանան ինքնուրույն կազմել բիզնես պլան
- իմանան՝ ով է անհատ ձեռներեցը՝ ԱՁ և ինչ է ՍՊԸ-ն,
- իմանան՝ ինչ է ռիսկը և որքանով է կարևոր ձեռներեցի համար,
- կարողանան տարբերել առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններն իրարից,

ԳՈՐԾՆԱԿԱՆ

Ուսումնասիրվել են “Ձեռնարկատիրական կրթություն” բաղադրիչը 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ դասարաններում, որի հետևանքով սովորողներն արդեն գիտեն, թե

ո՞վ է ձեռնարկատերը և ինչպիսի՞ անձնային հատկանիշներ պետք է նա ունենա.

- Պետք է բարիք արտադրի։
- Պետք է նորարար և ստեղծարար լինի։
- Պետք է լավ տեղեկացված լինի շուկայի պահանջարկի և իր մրցակիցների մասին։
- Պետք է կազմակերպված լինի և պլանավորի իր աշխատանքը։

6-րդ դասարանում ծանոթացել են Ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակների հետ: Դրանք են՝ Ձեռնարկատիրություն և ռիսկ, Անհատ ձեռնարկատեր, Ի՞նչ է առևտրային կազմակերպությունը, և որո՞նք են առևտրային կազմակերպությունների տեսակները, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Ձեռնարկատիրոջ կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակը շահույթ ստանալն է, իսկ այդպիսի գործունեություն ծավալելու համար նա պետք է լինի նախաձեռնող, ստեղծագործող և պրպտող մարդ՝ հավելելով նաև, որ ձեռնարկատերը պետք է մտածի քննադատաբար և գործունեության ընթացքում դիմի ռիսկի: 7-րդ դասարանում ուսումնասիրել են Ավանդական և Սոցիալական ձեռնարկատիրությունը: Տարբեր օրինակների հիման վրա գտել են դրանց նմանությունը և տարբերությունը: Ծանոթացել են են սոցիալական խնդիրների և դրանց լուծման հետ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքն անցկացրել եմ 6-րդ և 7=րդ դասարաններում :Ներկայացրել եմ՝ Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը, և ինչպե՞ս կարելի իրականացնել է այն;

Ձեռնարկատիրական գործունեությունը ձեռնարկատիրոջ կողմից իր մտածած բիզնես գաղափարը իրական ապրանքի կամ ծառայության վերածելու նպատակով կատարվող գործընթացները և աշխատանքներն են: Այլ կերպ ասած՝ եթե կա ձեռնարկատիրական գործունեություն, ուրեմն կլինեն նաև ապրանքներ և ծառայություններ, իսկ եթե չկա ձեռնարկատիրկան գործունեություն, ուրեմն չեն լինի նաև ապրանքներ և ծառայություններ: Ձեռնարկատիրոջ կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակը շահույթ ստանալն է, իսկ այդպիսի գործունեություն ծավալելու համար նա պետք է լինի նախաձեռնող, ստեղծագործող և պրպտող մարդ, պետք է մտածի քննադատաբար և գործունեության ընթացքում դիմի ռիսկի: Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությունը հնարավոր է իրականացնել 2 ձևով՝

ա. Ֆիզիկական անձի դեպքում գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր:

բ Իրավաբանական անձի դեպքում գրանցվել որպես առևտրային կազմակերպություն:

6-րդ դասարանում խոսել ենք “Ձեռնարկատիրություն և ռիսկ ինտեգրված թեմայի մասին : Նպատակս էր սովորողներին հասկացնել, որ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելը և ձեռնարկատիրոջ աշխատանքը կապված են ռիսկի հետ: Ավելի լավ պատկերացնելու համար պատմել եմ ռիսկի մասին մի պատմություն.

Հագուստ արտադրող մի ընկերություն վաճառքի բաժնի իր աշխատակիցներից մեկին ուղարկում է Տանզանիա, որպեսզի նա գնահատի այս մայրցամաքի հնարավորությունները և հագուստի շուկայի վերաբերյալ ներկայացնի մանրամասն տեղեկություններ: Մասնագետն այցելում էՏանզանիա, ծանոթանում է տեղի բնակչությանն ու հիասթափված զանգահարում է տնօրենությանը.

-Այստեղ ոչ մի աշխատանք չենք կարողանա անել: Մարդիկ չգիտեն, թե ինչ էհագուստը: Նրանք աղքատ են և հաստատ չեն ունենա համապատասխան գումար հագուստի դիմաց վճարելու համար: Իմաստ չունի ռիսկի դիմել և այստեղ ներդրումներ կատարել. հաստատ անհաջողության ենք մատնվելու:
Աշխատակիցը վերադառնում է, սակայն տնօրենությունը որոշում է մեկ այլ աշխատակցի ուղարկել Տանզանիա: Երկրորդ աշխատակիցը այցելում է այնտեղ և միանգամից ոգևորված զանգահարում է ընկերության տնօրենությանը:

-Այստեղ իդեալական շուկա է մեզ համար: Մարդիկ չգիտեն, թե ինչ է հազուստը, բայց մենք նրանց այդպիսի հնարավորություն կտանք և կլինենք առաջինը: Նրանք կգտնեն համապատասխան գումար, քանի որ արտասահմանյան շատ ընկերություններ այստեղ նոր աշխատատեղեր են բացում, իսկ դրա համար մարդիկ պետք է ունենան լավ արտաքին տեսք: Շուկան մեծ է, հնարավորությունները՝ շատ, առանց ժամանակ կորցնելու մենք պետք է ռիսկի դիմենք և մտնենք շուկա:

Պատմության ավարտից հետո աշակերտների հետ քննարկել ենք հետևյալ հարցերը.

•Ինչու՞ առաջին աշխատակիցը խուսափեց ընկերությանը ռիսկի ենթարկելուց:

• Ինչու՞ երկրորդ աշխատակիցը որոշեց ընկերությանը ռիսկի ենթարկել:

• Կարո՞ղ եք արդյոք դուք արդարացնել առաջին աշխատակցին:

• Կարո՞ղ եք արդյոք դուք մեղադրել երկրորդ աշխատակցին չափից դուրս ոգևորվելու համար:

• Իսկ եթե գործը ավարտվի հաջողությամբ, ո՞վ կշահի՝ այն մարդը, ով ռիսկի՞ դիմեց, թե՞ նա, ով չդիմեց:

Սովորողներին մոտ ձևավորվեց այն գաղափարը, որ ձեռնարկատերն այն մարդն է, որն անպայման ռիսկի է դիմում, քանի որ հազվադեպ է պատահում, որ գործի հաջողությունը 100% -ով ապահովված է լինում:

7=րդ դասարանում ուսումնասիրել ենք “ Ինչ է սոցիալական խնդ իրը և ինչպես աշակերտներին մեջ առաջացնել այն լուծելու ցանկություն:” ինտեգրված թեման:

Թեման սկսեցի՝ աշակերտներին բացատրելով, որ աշխարհում բոլոր մարդիկ էլ իրենց կյանքի ընթացքում բախվում են բազմաթիվ խնդիրների: Որ դա նորմալ և շատ բնական երևույթ է: Այնուհետև շարունակեցի այսպես. «Եկե՛ք մի պահ պատկերացնենք, թե ինչպես են ապրում մարդիկ մեր երկրում: Կտեսնենք, որ կան շատ մարդիկ, որոնք, օրինակ, չեն կարողանում ժամանակին վճարել իրենց երեխաների ուսման վարձը, իսկ շատ մարդիկ էլ չեն կարողանում վճարել կոմունալ ծախսերը, ոմանք չեն կարողանում բնակարան գնել, իսկ ոմանք էլ՝ անգամ դեղորայք գնել և այլն» : Ասացի, որ նման իրավիճակն առկա է աշխարհի բոլոր երկրներում: Աշխարհում բոլոր մարդիկ էլ առօրյա կյանքում բախվում են բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրների: Այդպիսին է կյանքը, և ոչ մեկը ապահովագրված չէ խնդիրներ ունենալուց: Անգամ հարուստ մարդիկ կարող են ունենալ բազմաթիվ խնդիրներ Եթե ուսումնասիրենք մարդկանց հուզող բոլոր խնդիրները, ապա կտեսնենք, որ այդ բազմաթիվ և բազմաբնույթ խնդիրների մեջ կան այնպիսի խնդիրներ, որոնք բնորոշ են և վերաբերում են առանձին մարդկանց, առանձին ընտանիքներին: Այդ խնդիրները պարզապես կենցաղային, ընտանեկան բնույթ ունեն: Սակայն կան նաև այնպիսի խնդիրներ, որոնք ազդում են մեծ թվով մարդկանց և ընտանքիների վրա: Եվ հենց այս խնդիրներն էլ կոչվում են սոցիալական

խնդիրներ: Ներկայացրեցի հենց մեր երկրում առավել տարածված սոցիալական խնդիրների օրինակներ: Աշակերտները ևս բերեցին իրենց իմացած օրինակները:

Օրինակ, մեր երկրում առավել տարածված սոցիալական խնդիրներն են.

- գործազրկությունը, երբ մարդիկ չեն կարողանում աշխատանք գտնել,

- աղքատությունը,

- երկրի բնակչության արտագաղթը,

- մարդկանց աշխատավարձերի և կենսաթոշակների ցածր մակարդակը,

- սննդամթերքի պակասը և բնակչության զգալի մասի թերսնումը,

- հիվանդությունների աճը և առողջապահության ցածր մակարդակը,

- կրթության ցածր մակարդակը,

- բնակչության զգալի հատվածի համար որակյալ կրթության անհասանելիությունը,

- հասարակության ներսում հաշմանդամների մեկուսացումը,

- կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը,

- երեխաների իրավունքների ոտնահարումը,

- օդի աղտոտվածությունը,

- գետերի աղտոտվածությունը,

- անտառների ոչնչացումը,

- սահմանամերձ գյուղերի վատ տնտեսական պայմանները և այլն։

- պլաստիկ թափոնների աճող պաշարները և այլն։

Նյութն ավելի մատչելի դարձնելու համար բերեցի հետևյալ օրինակները.

Սոնան պատմությունը.

Սոնան իր ընտանիքի՝ հայրիկի, մայրիկի և փոքր քույրիկի հետ ապրում է Հայաստանի գյուղերից մեկում և սովորում նույն գյուղի դպրոցում:Նա լավ է սովորում և միշտ ցանկանում է օգնել այլ մարդկանց, ինչով որ կարող է: Սոնայի հայրը աշխատում էր Երևանի գործարաններից մեկում, իսկ մայրը ուսուցչուհի էր: Նրա ծնողները համարվում էին կայուն միջին վաստակ ունեցող մարդիկ և կարողանում էին իրենց վաստակով հոգալ ընտանեկան հոգսերը: Սակայն շուտով գործարանը, որտեղ աշխատում էր նրա հայրիկը, փակվեց, և նա դարձավ գործազուրկ: Գործազուրկ դարձան նաև նրա մի քանի ընկերների ծնողները, որոնք նույնպես աշխատում էին այդ գործարանում: Սոնայի մայրիկի աշխատավարձը ցածր էր, և

նրանց ընտանիքը չէր կարող գոյատևել այդ գումարով: Սոնայի ծնողները որոշեցին վաճառել իրենց բնակարանը և ավելի էժան տուն գնել գյուղում: Բացի այդ՝ գյուղում նրանք կարող էին բանջարանոց մշակել, ընտանի թռչուններ պահել և այդ ձևով որոշ չափով լուծել նաև ընտանիքի համար անհրաժեշտ սննդամթերքի խնդիրը: Ժամանակի ընթացքում նրանց ընտանիքը հասկացավ, որ իրենք ճիշտ որոշում էին կայացրել: Այժմ նրանք գոնե սննդամթերքի խնդիր չունեին: Իրենց տնային տնտեսությունում արտադրված բարիքները՝ միրգը, բանջարեղենը, ձուն, երբեմն այնքան շատ էին լինում, որ նրանք այն նաև վաճառում էին: Սոնան պահպանում էր կապը իր ընկերների հետ և նրանցից տեղեկանում էր, որ իրենց ծնողները դեռևս աշխատանք չեն գտել, և իրենց ընտանիքներն անգամ սննդի խնդիր ունեն:

Նա շատ էր ցանկանում օգնել իր ընկերների ընտանիքներին: Սակայն ինչպե՞ս: Երկար մտածելուց հետո նա լուծումը գտավ ;Նա իր ծնողներին առաջարկեց պահել 10 ավել հավ և հավերի ձվերը նվիրել այդ ընտանքիներին: Ծնողների այն հարցին, թե արդյոք այդ 10ավել հավ պահելը իրենց համար լրացուցիչ ծախս չի առաջացնի, նա պատասխանեց, որ ինքը կատարել է հաշվարկ և արդեն գիտի, որ տարբերություն չկա: Սակայն այդ ավել 10 հավի թողած օգուտը՝ սոցիալական ազդեցությունը, իսկապես շոշափելի կլինի: Եվ Սոնան գործի անցավ: Նա ջանասիրաբար խնամում էր հավերին և ավելացած ձվերը նվիրում էր իր քաղաքաբնակ ընկերների ընտանիքներին: Պարզվեց, որ Սոնայի գաղափարը դուր եկավ ներկայիս դասընկերներին, որոնք նույնպես որոշեցին հետևել նրա օրինակին և օգնել իրենց քաղաքաբնակ կարիքավոր հասակակիցներին: Աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար նրանք որոշեցին ընտրել պատասխանատուներ՝ աշխատանքները ղեկավարեու համար: Շուտով նաև նրանք ձևակերպեցին իրենց բիզնես գաղափարը՝ «Սննդամթերքի բանկ՝ մեր քաղաքաբնակ կարիքավոր հասակակիցերի համար»:

Ամեն օր՝ դասերից հետո, Սոնանն իր դասընկերները շտապում էին տուն իրենց պարտականությունները կատարելու համար: Ոմանք խնամում էին հավերին, ոմանք բանջարանոցում էին աշխատում, իսկ ոմանք էլ օգնում էին տնային այլ աշխատանքներում: Իսկ արդյունքում և՛ իրենց ընտանիքների բարիքն էր ավելանում, և՛ «սննդամթերքի բանկն» էր հարստանում:

Աշխատանքի նման կազմակերպումը կոչվում է սոցիալական ազդեցություն, իսկ Սոնան և իր դասընկերներն էլ պատանի սոցիալական ձեռներեցներ են:

Աննայի պատմությունը

Աննայի հայրը ունի խանութ քաղաքում : Նրա մայրը մասնագիտությամբ հաշվապահ է և անձամբ ինքն է վարում խանութի հաշվապահությունը : Նրանց ընտանեկան այդ փոքրիկ բիզնեսն օր օրի բարգավաճում է՝ կայուն եկամուտ ապահովելով ընտանիքին: Նրա ծնողները կարողանում են ոչ միայն հոգալ առօրյա ծախսերը, կազմակերպել ընտանեկան հանգիստը, այլ նաև պլանավորել ապագան:

Աննան ունի շատ ընկերներուհիներ, որոնցից շատերի հետ նա շփվում է նաև դասերից հետո: Նրանք միասին հաճախում են՝ պարի պարապմունքի: Աննայի ընկերների մեջ առանձնանում է հատկապես Անին: Սակայն նա դասերից հետո երբեք չէր միանում ընկերներին և միշտ շտապում էր տուն: Աննան շատ էր ցանկանում իմանալ, թե ինչու Անին դասերից հետո չի միանում իրենց խմբին: Հարցի պատասխանը նրան շատ մտահոգեց: Անիի մայրը հաշմանդամ էր, գամված էր անվասայլակին: ավտովթարից հետո ընտանիքը մի կերպ գոյատևում էր մոր: Աննան որոշեց օգնել Անիի ընտանքին: Նա խորհրդակցեց իր ծնողների հետ: Մայրն առաջարկեց իրենց խանութում աշխատանքի վերցնել Անիի մայրիկին և նրան տալ որևէ համապատասխան աշխատանք, որը հնարավոր կլինի կատարել նաև անվասայլակի վրա նստած վիճակում, օրինակ՝ գանձապահ: ԻսկԱնիի մայրիկին հենց իրենք էլ իրենց ավտոմեքենայով աշխատանքի կբերեին, իսկ այնուհետև տուն կտանեին: Աննայի ընտանիքի առաջարկը Անիի մայրիկն ընդունեց աննկարագրելի ուրախությամբ: Չէ՞ որ նա իրեն անպետք էր համարում և չէր կարծում, որ բախտն իրեն կժպտա, և ինքը կկարողանա գումար վաստակել և հոգալ ընտանիքի կարիքները:

Արդեն բավական ժամանակ է, ինչ Անիիմայրիկն աշխատում էխանութում: Նա լավ աշխատող է, և Անիի ծնողները գոհ են նրա կատարած աշխատանքից: Աննայի հայրիկի խանութը այժմ լոկ խանութ չէ. այն դարձել է սոցիալական ձեռնարկություն՝ իր այն սոցիալական ազդեցության շնորհիվ, որն օգնեց Անիի ընտանիքին լուծելու սոցիալական խնդիրը:

Այս օրինակներն օգնեցին, որպեսզի երեխաների մոտ նույնպես առաջանա սոցիալական խնդիր լուծելու ցանկություն:

Նրանք որոշեցին գործնական դասերի ժամանակ պլաստիկ շշերի թափոններից պատրաստել տարբեր իրեր և խաղալիքներ: Կազմակերպել դպրոցում ցուցահանդես – վաճառք և ստացած հասույթով օգնել որևէ անապահով ընտանիքի: Այս դեպքում նրանք կլուծեն երկու սոցիալակն խնդիր՝

- Համայնքի աղտոտումը պլաստիկ թափոնների հետևանքով:
- Օգնություն անապահով ընտանի

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Դասի պլան

Առարկան-Տեխնոլոգիա
Դասարան-6-րդ
Դասի թեման՝ ինտեգրվող թեմա
- Ի՞նչ է ձեռնարկատիրությունը

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Նպատակը՝ ուսուցիչը սովորողներին պետք է բացատրի, թե ինչ է ձեռնարկատիրական գործունեությունը, ինչպես է այն իրականացվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, ով է համարվում իրավաբանական անձ և ով՝ ֆիզիկական, ինչով են տարբերվում իրարից:

Վերջնարդյունքը՝ Սովորողը պետք է իմանա

- որն է ձեռնարկատիրական գործունեությունը
- որ այն կարելի է իրականացնել երկու ձևով.

1.որպես ֆիզիկական անձ, այսինքն՝ որպես անհատ քաղաքացի,
2.որպես իրավաբանական անձ, այսինքն որպես կազմակերպություն:

- Կարողանա բացատրել՝ ինչով են դրանք տարբերվում մեկը մյուսից, և բերել օրինակներ իր շրջապատից և համայնքից:
- Նկարագրել, որ

ա) ֆիզիկական անձը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել որպես «Անհատ ձեռնարկատեր» գրանցվելու միջոցով:
բ) իրավաբանական անձը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել որպես «Առևտրային կազմակերպություն» գրանցվելու միջոցով:
Ուսուցման մեթոդներ՝ Մտագրոհ , խոսքային՝ բացատրական

Դասի ընթացքը՝

Խթանում ՝ 5 րոպե “Մտագրոհ” մեթոդի միջոցով ուսուցիչը պետք է ստուգի սովորողների ունեցած գիտելիքները ձեռնարկատիրական գործունեության , ձեռներեցի, բիզնես գաղափարի մասին:

Իմաստի ընկալում ՝ 25 րոպե

ՈՒսուցիչը պետք է բացատրի,որ ձեռնարկատիրական գործունեությունը ձեռնարկատիրոջ կողմից իր մտածած բիզնես գաղափարը իրական ապրանքի կամ ծառայության վերածելու նպատակով կատարվող գործընթացներն ու աշխատանքներն են: Ներկայացնի «ֆիզիկական անձ» և «իրավաբանական անձ» հասկացությունները և բացատրի «ֆիզիկական դրանց կարգավիճակները, որպեսզի աշակերտները միանգամից տարբերակեն ֆիզիկական անձը իրավաբանական անձից: Եթե ֆիզիկական անձը մարդն է՝ անհատ քաղաքացին, ապա իրավաբանական անձը դպրոցն է, սուպերմարկետն է, գործարան է, մեկ բառով արտահայտած՝ կազմակերպությունը: Դա նշանակում է, որ մարդը՝ անհատ քաղաքացին, ինչպես նաև բոլոր մարդիկ ունեն ֆիզիկական անձի կարգավիճակ, իսկ կազմակերպությունները՝ իրավաբանական անձի կարգավիճակ: Հարկ է նշել, որ «ֆիզիկական անձը» կարգավիճակ է, որը տրվում է մարդուն՝ նրա ծնվելու պահից և պահպանվում է մինչև նրա մահը: Իսկ «իրավաբանական անձը» կարգավիճակ է, որը տրվում է միայն օրենքով սահմանված կարգով ձևավորված և օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող կազմակերպչական միավորին (կազմակերպությանը), այլ ոչ թե մարդուն:

Այնուհետև ուսուցիչը պետք է առաջարկի աշակերտներին բերել ֆիզիկական անձի և իրավաբանական անձի օրինակներ: Ապա նա հանձնարարում է աշակերտներին լրացնել հետևյալ աղյուսակը: Սա անհատական աշխատանք է, և յուրաքանչյուրը պետք է լրացնի իր համար:

Ֆիզիկական անձի օրինակներ Իրավաբանական անձի օրինակներ

Կշռադատում՝ 10 րոպե

Քառաբաժան մեթոդի միջոցով պարզել սովորողների զգացողությունը,ինչպես նաև նյութիընկալման աստիճանը:

1. Ի՞նչ գիտեին: 2.Ի՞նչը նոր իմացան: 3. Ի՞նչն էր անհասկանալի 4. Ի՞նչը կկիրառեն կյանքում:

Գնահատում՝ 5 րոպե

Դասի պլան

Առարկան- Տեխնոլոգիա

Դասարան- 7-րդ

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Ինստեգրվող թեմա

Ինտեգրվող թեմա՝ Սոցիալական ձեռնարկատիրություն

Նպատակը՝ Սովորողներին բացատրի,թե ով է

ա, Սոցիալական ձեռներեցը

բ. Ավանդական ձեռներեցը

գ. Ինչով է տարբերվում սոցիալական ձեռներեցը ավանդականից

դ. Որն է սոցիալական ձեռներեցի առաջնային նպատակը

ե . Որն է ավանդական ձեռներեցի առաջնային նպատակը

Ուսուցման միջոցներրը՝Դասագիրք,գրականություն

համակարգիչ, համացանց

Ուսուցման մեթոդները՝Մտագրոհ, խոսքային՝ բացատրություն,

Միջառարկայական կապեր՝ Տնտեսագիտություն

Դասի ընթացքը

՝

Խթանում -10 րոպե

Ուսուցիչը “Մտագրոհ” մեթոդով պետք օգնի, որ վերջիններս վերհիշեն ձեռնարկատիրական կրթության այն հիմնական գիտելիքները և առանցքային թեմաները, որոնք նրանք ուսումնասիրել են անցած տարիների ուսումնառության ընթացքում: Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունն առհասարակ, որո՞նք են այդ գործունեության հիմնական նպատակը և շարժառիթը, ո՞վ է ձեռնարկատերը, ի՞նչ է շահույթը, ի՞նչ է բիզնես գաղափարը, ի՞նչ է նշանակում հետազոտել շուկան, ինչու՞ է ձեռնարկատիրոջ համար կարևոր բիզնես պլան գրելը և այլ հարցերի միջոցով վեր հանեն անցած նյութի իմացությունը: Ստանալով հարցերի պատասխաններն՝ ուսուցիչը պետք է նշի, որ այն բոլոր գիտելիքները, որոնք սովորողները ձեռք են բերել նախորդ տարիներին ձեռնարկատիրական կրթության շրջանակներում, վերաբերում են ավանդական ձեռնարկատիրությանը: Երբ ուսուցիչը վստահ կլինի, որ աշակերտները պատշաճ կերպով հիշում են ձեռնարկատիրական կրթության հիմնական թեմաները և արդեն պատրաստ են նոր գիտելիքների յուրացմանը, նա կարող է առաջ անցնել և ձեռնամուխ լինել սոցիալական ձեռնարկատիրության թեմաների դասավանդմանը:

Իմաստի ընկալում -25րոպե

Ուսուցիչը պետք է հաղորդի գիտելիքներ սոցիալական ձեռնարկատիրության մասին Աշակերտներին նախ և առաջ պետք է հանգամանորեն բացատրի՝ ինչու որոշ ձեռնարկատերերի կարելի է անվանել ավանդական ձեռնարկատեր, իսկ որոշ ձեռնարկատերերի՝ սոցիալական, և, առհասարակ, որն է սոցիալական ձեռնարկատիրության և ավանդական ձեռնարկատիրության միջև եղած հիմնական տարբերությունը:

Կարելի է բացատրել հետևյալ ձևով. իրենց խառնվածքով, նպատակասլացությամբ, գործնական հմտություններով, խանդավառվելու, ինչպես նաև խնդիրների շուրջ

մտորելու ունակությամբ և կարողությամբ սոցիալական ձեռներեցները և ավանդական ձեռներեցները շատ նման են իրար: Դեռ ավելին, սոցիալական ձեռներեցների մեծ մասն իրենց նպատակներին հասնելու համար օգտագործում են հենց ավանդական ձեռնարկատիրության մեթոդները և ձևաչափերը: Իսկ ավանդական ձեռներեցությամբ զբաղվողներն էլ իրենց գործունեության ընթացքում շատ հաճախ ձգտում են նաև լուծել սոցիալական հարցեր: Այսպիսով, սոցիալական ձեռնարկությունը եկամուտ ստեղծող բիզնես է՝ ձեռնարկատիրական գործունեություն կամ ծրագիր , որն ստեղծված է երկակի նպատակի համար՝ եկամուտ ստանալ և աջակցել որևէ սոցիալական խնդրի լուծմանը: Սոցիալական ձեռնարկատերերի և ավանդական ձեռնարկատերերի միջև եղած հիմնական տարբերությունը բացահայտվում է հետևյալ հարցերի պատասխանների միջոցով.

- Ո՞րն է ձեռնարկատիրոջ առաջնային նպատակը
- Ինչի՞ն է նա ձգտում:
-Ի՞նչն է ցանկանում նա առավելագույնի (կամ նվազագույնի) հասցնել:
- Ո՞րն է նրա ծավալած գործունեության հիմնական դրդապատճառը:
- Ի՞նչ նպատակով է օգտագործվում շահույթը:

Կշռադատում՝ 5 դրոպե

Քառաբաժան մեթոդի միջոցով պարզել

Ինչ գիտեմ Ինչ իմացա

Ինչ եմ ուզում իմա Ի՞նչն էր անհասկանալի:

Ինչ իմացա

Վերջնարդյունք՝

Սովորողը պետք է իմանա

ա, Ով է ոցիալական ձեռներեցը

բ. Ով է ավանդական ձեռներեցը

գ.Որն է սոցիալական ձեռներեցի առաջնային նպատակը

դ.Որն է ավանդական ձեռներեցի առաջնային նպատակը

ե. Պետք է կարողանա տարբերել սոցիալական ձեռներեցը ավանդականից, բերել տարբեր ճրինակներ

Գնահատում՝ 5 ր

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Դպրոցի տարբեր ուսուցիչներից եղան հարցումներ, նրանց կողմից կատարվեցին դասալսումներ և քննարկումներ: Այս ամենից հետո հանգեցինք այն եզրակացությանը, որ “ Ձեռնարկատիրական կրթություն” բաղադրիչի ինտեգրումը տեխնոլոգիա առարկայում նպաստում է ,որպեսզի աշակերտները մտածեն կաղապարներից դուրս, ստեղծագործաբար, նոր ձևով, լինեն նորարար, նախաձեռնող, համարձակ, ինքնուրույն, վճռական , դառնան ինքնավստահ, կարողանան կայացնել որոշումներ,ներգրավվեն թիմային աշխատանքում, պլանավորելն գործողությունները, սովորեն փող աշխատել, լինեն խելացի սպառողներ, պատկերացնեն ձեռներեցի և բարիք ստեղծողի դերը և նրանց տարբերությունը, իմանան փող վաստակելու նպատակով գործ նախաձեռնելու և կազմակերպելու կարևորությունը, իմանան՝ ինչ է բիզնես գաղափարը և բիզնես պլանը:

Քանի որ կրտսեր դպրոցականները սկզբնական շրջանում այնքան էլ լավ չեն պատկերացնում բիզնես գաղափարը, նրանց հետ այս բաղագրիչը կարելի է անցկացնել խաղային մեթոդով՝ օգտվելով տարբեր հեքիաթներից, առակներից, պատմվածքներից: Լավ արդյունք է ստացվում, երբ աշխատանքյը կատարվում է խմբերով և մրցույթային եղանակով: Դա նպաստում է, որ երեխաներն ավելի գեղեցիկ, ճաշակով , և ավելի շատ քանակով իրեր պատրաստեն և վաճառեն կամ նվիրեն իրենց մտերիմներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասրրելով Ձեռնարկատիրական կրթությունը տեխնոլոգիա առարկայում՝ նրանք պետք է իմանան, որ ձեռներեցը նույն բիզնեսմենն է: Աակերտները պետք է հասկանան, որ իրենք նույնպես կարող են առաջարկել և ներկայացնել ցանկացած մտքեր և գաղափարներ: Սակայն այդ գաղափարներն իրականացնելու համար նրանք դասարանում պետք է ունենան համապատասխան ռեսուրսներ և հնարավորություններ :

Օրինակ աշակերտներին կարող ենք առաջարկել գրչատուփ պատրաստելու գաղափարը: Նրանք կարող են սեփական ձեռքերով գրչատուփ պատրաստել և նվիրել իրենց սիրելիներին: Դրանով նրանք կարող են փող խնայել: Առաջին հայացքից թվում է,թե այս բաղադրիչի ինտեգրումն անհասկանալի կլինի կրտսեր դպրոցականների համար, բայց բացատրելոից հետո, նրանց մոտ ցանկություն է առաջանում դառնալ բարիք ստեղծող, ձեռներեց , ունենալ իրենց փոքր բիզնեսը և գումար վաստակել:
Աշակերտներն իմանում են , ե ինչ է իրենից ներկայացնում Ձեռնարկատիրական գործունեեությունը և ինչ ձևով է իրականցվում: Որն է ավանդական ձեռնարկատիրությունը և որն է սոցիալականը: Ինչով են իրարից տարբերվում: Այդ տեսակներից առաջինը ավանդական ձեռնարկատիրությունն է, որն ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես ձեռնակատիրոջ կողմից իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը շահույթ վաստակելն է:
Ձեռնարկատիրական գործունեության երկրորդ տեսակը սոցիալական ձեռնարկատիրությունն է: Սոցիալական ձեռնարկատիրոջ առաջնային նպատակը սոցիալական որևէ հարց, մարդկանց հուզող որևէ խնդիր լուծելն է: Սակայն, չնայած դրան, եթե սոցիալական ձեռնարկատիրոջ սկսած գործը եկամուտ չստեղծի, ապա նա պարզապես չի կարողանա շարունակել այդ գործը: Անշուշտ, սոցիալական ձեռնարկատերը հետաքրքրված է նաև իր անձնական եկամտով, և ձեռնարկության վաստակած եկամուտի մի մասը տնօրինվում է նրա կողմից՝ որպես ներդրված ձեռնարկատիրական ջանքների և ռիսկի փոխհատուցում: Հետևաբար, սոցիալական ձեռնարկատիրոջ կողմից շահույթի մասին մտածելը կարևոր է սակայն ոչ թե որպես ինքնանպատակ, այլ որպես հետագա ֆինանսավորման և առաջխաղացման միջոց՝ սոցիալական նպատակներին հասնելու համար

Սոցիալական ձեռնարկատիրակությանն առնչվող թեմաները 7-րդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայում ներառելու նպատակն այն է, որ աշակերտները հասկանան, գնահատեն խնդիրները,առաջ քաշեն իրենց գաղափարները և գտնեն դրանց լուծման ճանապարհը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012:

https://cloud.mail.ru/public/N9kG/bwmJS5Xzg

2. Հովսեփյան Ս. և ուրիշներ, «Տեխնոլոգիա», VI և VII դաս. դասագիրք, Երևան, Տիգրան Մեծ, 2004:

4. Տնտեսագիտություն, դասագիրք, Ռ Ա Թ Վ մ ա յ ա ն, 2004:

5. Աշակերտական գործարար ընկերություն, Հայաստանի պատանեկան նվաճումներ, 2017: